ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժին ներգրաված փորձագետ Գոհար Լևոնյանի 2019 թ. սեպտեմբեր - 2020թ. մայիս ընկած ժամանակահատվածի համար

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի «Փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 135-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված աշխատանքային ծրագրերն իրականացնելու նպատակով, 2019 թվականի սեպտեմբերի 16-ից ընդգրկվել եմ Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնում որպես փորձագետ (հիմք՝ 13.09.2019 թվականին կնքված պայմանագիր N15):

Համաձայն Հրամանով հաստատված հավելվածի 5-րդ կետի՝ ներկայացնում եմ **16.09.2019-16.05.2020 թվականների** ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքներ՝

- Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 30.01.2017թ-ի «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը հաստատելու մասին» թիվ 27-Ն հրամանի պահանջին համաձայն հավաքագրել, գրանցել և կազմել եմ առանձին միջոցառումների գծով կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին Կոմիտեի 2019 թվականի 9-ամսվա, 2019 թվականի տարեկան, 2020 թվականի 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվություններն ըստ հոդվածների (օրինակելի Ձև Հ-2), «Գանձապետական գործառնական» (LS Finance) ծրագրով ներկայացրել ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռները, տարեկան վերլուծական հաշվետվությունը, ինչպես նաև կազմել եմ ծրագրի միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունները և ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.
- սահմանված ժամկետում ստացել, ստուգել և ամփոփել եմ Կոմիտեի ենթակայության ՊՈԱԿ-ների 2019 թվականի 9-ամսվա, 2019 թվականի տարեկան և 2020 թվականի 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները (Հավելված 1,2,3,4) և ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն.

- յուրաքանչյուր ամսվա 10-ին էլեկտրոնային համակարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրել եմ բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվությունը.

- համաձայն Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 21.10.2019 թվականի նիստի N ԿԱ/176-2019 հանձնարարականի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2020 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում քննարկման առարկա դարձնելու նպատակով, հավաքագրել և ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ ֆինանսների նախարարություններ եմ ներկայացրել Կոմիտեի և նրա ենթակայության տակ գտնվող պետական մարմիններում (սպասարկվող տարածքներ) ներկայումս շահագործվող լուսավորության շիկացման լամպերն էներգախնայող (լուսադիոդային) լամպերով փոխարինման և դրա արդյունքում ակնկալվող խնայողության վերաբերյալ հաշվարկները.

- հիմք ընդունելով Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 25.10.2019 թվականի թիվ ԿԱ/175-2019 նիստի արձանագրությունը, ինչպես նաև ՀՀ վարչապետի հանձնարարականը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել բյուջետային խնայողությունների և թերակատարումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն.
- կազմել և ներկայացրել եմ Կոմիտեի և ՊՈԱԿ-ների «Ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն 12.11.2018թ-ի թիվ 65-Ն որոշման՝ Ձև 1-տրանսպորտ (տարեկան).
- հաշվարկել, կազմել և սահմանված ժամկետում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն եմ ներկայացրել Կոմիտեի 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի, ինչպես նաև 2021թ-ի բյուջեի նախագծերի մշակման հայտերը:
- ամփոփել և ներկայացրել եմ համակարգում գործող ՊՈԱԿ-ների 2021-2023թթ.-ի միջնաժամկետ ծախսային ծրագրերի, ինչպես նաև 2021թ-ի բյուջեի նախագծերի մշակման հայտերը:

- հաշվարկել, կազմել և սահմանված ժամկետում ՀՀ վիճակագրական կոմիտե եմ ներկայացրել 2019 թվականի տարեկան «Աշխատողների թվաքանակի, աշխատած ժամերի, աշխատողի վրա գործատուի կատարած ծախսերի մասին»

հաշվետվությունը՝ /Ձև 1-Ա/ միաժամանակ ամփոփելով նաև համակարգում գործող ՊՈԱԿ-ների կողմից ներկայացված ձևերը:

- համաձայն ՀՀ կառավարության 26.12.2019թ-ի թիվ 1919-Ն որոշման 4-րդ կետի՝ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել Կոմիտեի կողմից իրականացվող ծրագրի միջոցառումների գծով 2019թ-ի տարեկան և 2020թ-ի 1-ին եռամսյակի բյուջետային ծախսերի ոչ ամբողջությամբ կատարման պատճառները (ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների) :

Միաժամանակ նշեմ, որ հաշվետու ժամանակաշրջանում կատարել եմ նաև իմ անմիջական ղեկավարի և վարչության պետի բանավոր այլ հանձնարարականներ:

Հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի փորձագետ **Գոհար Լևոնյան**

18 մայիսի 2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի **հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժին ներգրաված փորձագետ Գոհար Վարդգեսի Լևոնյանի կողմից** հաշվետու ժամանակահատվածում՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2020 թվականի մայիսի 16-ը կատարված աշխատանքները գնահատվում են ____գերազանց_____:

/բավարար, լավ կամ գերազանց/

Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի պետ

/գնահատող պաշտոնատար անձի պաշտոնը/

Հենրիկ Սահակյան

/անունը, ազգանունը/

ստորագրություն/

«18» 05 2020թ.